

է, և ներկի չէ ճեզ վերցնել մահճի՞նդ»։ Աւետարանիչն ալ կը հաստատէ հոգ՝ թէ Յիսուս այդպիսի գործերով «կը լուծէր շարաթները»։ Իսկ Տէրը չէր ժխտեր լուծելը, այլ կ'արդարացնէր, ըսելով՝ թէ «իմ Հայրս մինչև հիմայ կը գործէ, և ես ալ կը գործեմ» (Թ. Ե, 8-10, 17, 18)։ Ուրեմն հոս ալ յայտնի է Փրկչին շարաթը լուծելու կամ վերածելու սկսածը։ Եւ այսպէս հրէական շարաթը սկսած էր խախտիլ նոյն ինքն Յիսուսի գործով ու վարդապետութեամբ։

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

(Շարունակելի)

ՔՆՆԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ ԵԶՆԻԿԻ ՄԱՍԻՆ

(Լ. Մարիէսի աշխատութեան առթիւ)

I.

Հին մատենագիրների շարքում Եզնիկ կողորացին այն բացառիկ գէմբերիցն է, որ պահել է գոնէ ցայժմ իր աւանդական հոչակը ամուր, և ամբասիրւ Սյն ինչ ներկայումս անվստահութիւնն ու կասկածները մթազնել են մեր գրի սկզբնական շրջանի հորիզոնները և թանձր ստուեր ձգել շատ անունների վերայ, Եզնիկը մնացել է անխոցելի և ամեն տարակուսանքից վեր։ Չէ թէ միայն ոճի և բովանդակութեան կողմից, այլ և հաւաստիութեան տեսակետից կողորացու փոքրիկ երկը հաշուում է հայ գրականութեան պարծանքը։

Եզնիկին նուիրուած նոր ուսումնասիրութիւնը, որ պատկանում է մի լատին կրօնաւորի, չի սպառնում բնաւ որ և է կերպ նսեմացնելու նորա դարաւոր փառքը։ Ընդհակառակը, հայ բանասէրների կողմից, գլխաւորապէս Նաբայրի և Աճառեանի, յայտնուած ճանի մի դիտողութիւններ, որոնք նկատում էին բժեք գտնելու Եզնիկի գործի մէջ, Լ. Մարիէսի խոնհուն մտքի առաջ ընկրկում են և չքանում։

Հէնց սկզբից Եզնիկի նոր ցննադատը յայտնում է, որ աւանդական տեսակէտը

ստոյգ և ընդունելի է համաձայն Ս. Վերբի լուսարանութեան, և մատենագիր Եզնիկ կողորացին (սխալմամբ կողոր Տայրի մէջ է դնում) այն անձն է, որ ներկայ էր Արտաշատի ժողովին 449 թականին և որ իր երկը գրել է 441, աւելի ճիշդ 445-448 թ. մէջ, ինչպէս հաշուում է նոյն վեբերը։ Այստեղից հետևումէ այն յայտարարութիւնը, որ անում է Մ., որ «Եզնիկի հարց չկայ, ինչպէս հայ խորհանցու և կամ Աթաթանգեղոսի և ուրիշ նման հարցեր»։

Դժբախտաբար, վաղամամ ենք համարում այսօրինակ համարձակութիւններ և ցուում, որ Մարիէս, հակառակ իր ցննական և զննական ընտրի ձիրքերին, հաւատ է ընծայել վեբերի հաշիւներին, որ համոզիչ հիմքեր ունենալուց հետո են։

Արդարեւ, վեբերի ելակէտը Եզնիկի մի նկատողութիւն է պարսից կրօնի մասին, որ «ընդ գրով չեն կրօնքն», այսինքն գրի չեն առնուած, ուստի երբեմն այս են ասում, երբեմն այն մարդկանց խաբելու և մոլորեցնելու համար (Բ. 9)։ Այս խօսքերը Եզնիկը չէր կարող սասել, ըստ վեբերի, պարսից հազարապետ Միհրեքսէնի դաւանական նամակից յետոյ, որ ուղղուած էր հայերին Յազկերտ թագաւորի հրամանով։ Պարսից թուղթը և նրա պատասխանը հայոց կողմից, գրուած Արտաշատի ժողովում, նմանութիւն ունին Եզնիկի գործին, որը բացատրելու նրա անմիջական մասնակցութեամբ, և ուրեմն, եզրակացնում է վեբերը, նորա երկը 450ից յառաջ պիտի գրուած լինի։

Նախ յայտնի չէ, Եզնիկի նկատողութիւնն իրեն է պատկանում, թէ քաղած է զբաւոր աղբիւրից։ Ինչպէս կը տեսնենք ստորև, պարսից կրօնի վերաբերեալ հիմնական յօդուածը թարգմանածոյ է։ Եւ որ յիշեալ նկատողութիւնը վերցրած է զբաւոր աղբիւրից, զորա կտրական ապացոյցն այն է, որ նոյն միտքը գտնում ենք նաեւ Բարսեղ կեսարացու մօտ. խօսելով τὸν μαργουσαίων ἐθνός Ի մասին, նա նկատում է. οὐτε γὰρ βίβλια ἔστι παρ' αὐτοῖς οὐτε

διδάσκαλοι δογματών, ἀλλὰ ἔδει ἀλόγῳ συντρέφονται, παῖς παρὰ πατρός διαδεχόμενοι τῇν ἀσέβειαν. որ է մողերի (մագուս, հին պարսկ. maguš) ժողովուրդը ոչ զիրք ունին և ոչ կրօնի վարդապետներ, այլ անմիտ սովորութեամբ են սնուում հօրից որդի ժառանգելով ամբարշտութիւնը՝

Ձեռք ուզում ասել, որ Եղիշիկ կախումն ունի Բարսեղից։ Ստորեւ կը տեսնենք, որ երկու հեղինակների մէջ և ուրիշ նման կէտեր կան, այնպիսի հանդիպումներ, որոնք ենթադրել են տալիս ընդհանուր աղբիւրի գոյութիւնը։ Եթէ այս աղբիւրից է առած հայ հեղինակը մեզ հետաքրքրող տողերը պարսից կրօնի մասին, ապա ուրեմն վերեւի դատարկութիւնները կ'որոշեն մեզ իրենց հողը։

Սակայն ընդունենք իսկ մի բոլոր, որ նոյն տողերն իրեն Եղիշիկին է պատկանում։ Միամտութիւն կը լինէր կարծել, որ Միհրհրեւելէին վերագրած թուղթը պատմական իսկութիւն է և նրա վերայ յենուեն այս դէպքում ներելի։ Բաւական է յիշել, որ երկու ժամանակակից համարուած հեղինակ, Եղիշէն և Ղազարը, տարբեր բաներ են պատմում թղթի թէ՛ էութեան և թէ՛ հետեանքի մասին։ Ճշմարիտ է, Ղազարին եւս անծանօթ չէ, որ Միհրհրեւսէն «իրենց օրէնքը գրել և զրկել է հայերէն», բայց նա աւելացնում է, որ հայերը մինչեւ իսկ արժանի չհամարեցին բանալ թուղթը և կարդալ։ Ահա նորա բուն խօսքերը. «այլ վասն օրինաց ձեռոց, զոր գրեալ էր և տուեալ բերել առ մեզ, մեք ձեզ ոչ երբեք լսեմք։ Մինչ որ այդր լինիմք ի դրանն և կամ ի մուգուցդ որ ձեռ օրէնստույցդ իմի կոչին, այպիս արարեալ արհամարհեմք. թող թէ և բոց ևս յօժաւ բեցուցանէք զմեզ կարդալ և լսել որ ինչ ոչ է մեզ պիտոյ և խնդիր։ Այլ յառաւել ևս պատուելոյ զթագաւորութիւնդ ձեռ և յաւալ անգամ զորհալոյ կամ տեսնել ոչ կամեցաք. զի զօրէնս զոր ճանաչեմք եթէ սուտ են և անմիտ մարդոյ բարբառջմունք,

զոր քաղում անգամ մեր լուեալ է ի ձեռ անուանեալ սուտ վարդապետացը և տեղեակ եմք իբրև զձեզ, զայն ոչ կարդալ պարտ է և ոչ լսել։ Դարձեալ կրկնում է. «զձեռ սուտ և զարժանի ծաղու օրէնսդ չհամարեցաք արժանի կարդալոյ և մասնուցանելոյ ի մեզ»¹։

Այսպէս է խօսում Փարպեցին, մինչ Եղիշէն բերում է պարսից դաւանական թուղթը և նրա հերքումը։ Մտադիր չենք բնաւ մէկի խօսքերը միևնույժ քննելու և կամ մէկի կարծիքին առաւելութիւն տալու։ Երկու պատմագիրն էլ այս դէպքում ճշմարտութեան դէմ մեղանշում են պատմական տեսակէտից։

Այլ է գրականը. նամակագրութիւնը հին գրականութեան մէջ ընդունուած ձեւ է, որ հեղինակները յաճախ յօրինում են որոշ դիտումներով, այս կամ այն միտքը աւելի ազդու և ցայտուն կերպով ներկայացնելու համար։ Հաւանական է, որ պարսկական դրան կողմից որ և է գրաւոր հրաման եղած լինի։ Սրա շուրջը ծագել են գրագրութեան զրոյցը։ Մի պատմագիրը հարկաւոր է համարել յօրինել և թուղթն և պատասխանը և այդպիսով երևան հանել պարսիկների կրօնական տկարամտութիւնը և հայերի քրիստոնէական շնորհաւորութիւնը։ Միւս պատմագիրը նոյն նպատակի համար, նա մանաւանդ պարսիկներին վիրաւորելու դիտաւորութեամբ, գերադասել է այնպէս ձևացնել, որ հայերը նոյն իսկ պէտք չեն տեսել անհաւատների թուղթը կարդալու, մօտէն ծանօթ լինելով նրանց ամբարշտութեան։ Այսօրինակ միտումաւոր գրութիւնների վերայ հիմնել այնպիսի գրական բարդ խնդիր, որովպիսին է Եղիշիկի հարցը, նշանակում է իրաւամբ աւագի վերայ սուտ շինել։

Դրական ապացոյց չունինք նաեւ Եղիշիկի և Արտաշատի ժողովին մասնակից բազրեանդայ եպիսկոպոսի նշանութեան, ինչպէս և հաստատուն կողման չկայ, որ

1. (Ad Epiph. 4. P. G. col. 258).

2. Ղազար փարպեցի, էջ 128-129.

մատենագիր Եղիշէն Նոյն ժողովի անդամ Սմատունեաց Եղիշէ եպիսկոպոսի հետ մի անձն է։ Արդեօք Եղիշէի մատենանը, ծանօթ լինելով ֆիլոսոֆիայ թարգմանութեան, կարող է Արտաշատի ժողովին ժամանաւ կակից համարուել։

Ձեռք ուղում այժմէն իսկ պնդել, որ Նոյն դրութեան մէջ է և հռչակաւոր «Եղծ աղանդոց»ը, Սմենայն ղէպըում խնդիրն այնքան էլ պարզ չէ, ինչպէս թուում է շատերին։ Կը կամենայի օգտուել ղէպըից, յաջող առթից, որ տալիս է Մարիէսի լրջմիտ աշխատութիւնը, և հրապարակ հանել քանի մի անձնական դիտողութիւններ, որ դրաղեցնում են ինձ վազուց, և որ կարող են անորոշութեան եթէ ոչ անվստահութեան ամպեր բերել Եղնիկի գործի շուրջը¹։

II.

Լ. Մարիէսի աշխատութիւնը կոչում է «Le De Deo d'Eznik de Kolb connu sous le nom de «Contre les sectes» մի վերնագիր, որ ինքնին բնորոշում է Եղնիկին նուիրած նոր ուսումնասիրութիւնը և յայտնում նորա էութիւնը։

Ասել է թէ, քննադատը եկել է այն եզրակացութեան, որ հանրածանօթ Եղծ աղանդոցը կոչելու է այսուհետեւ Յաղագս Աստուծոյ։

Անուան խնդիրը, որքան և ձեւական ինքն ըստ ինքեան, արժանի է սակայն ուշադրութեան, ցորչափ որ մերկայնում է զբական գործի ոգին և կամ նպաստում է հասկանալ նորա կառուցուածքը։

Վերնագրի հարց է ծագում, որովհետեւ միակ թանգագին ձեռագրերը, որ պահել է մեզ Եղնիկի գանձը, կորցրել է վերնագիրը։ Առաջին հրատարակիչը Արահամ վարդապետը յայտնում է իր յառաջարանի մէջ, որ ինքն է բաժանել «զերկար ճա-

ռակերպ գրեական ըստ զանազանիցն պարբերութեանց իմացուածոյ ի գլուխս 76»։

Վննետիկցիք արտասպակելով Նոյն հրատարակութիւնը, պահել են բաժանութիւնը չնչին փոփոխութեամբ, և այն ոչ միշտ յաջող, վերածելով նաև ամբողջ երկը չորս գրքերի։

Արահամ վարդապետը կոչել է իր հրատարակութիւնը Գիրք ընդդիմութեան և Արաչն Բագրատունին, Վննետիկի հրատարակութեան նախաձեռնողը, յարմար է դատել անուանել Եղծ աղանդոց։

Եղնիկին յամենայն ղէպս անպարտ է այս խնդրում և պատասխանատու չէ ընտրած վերնագրիներին համար, քանի որ ձեռագրերը չէ պահել երկի իսկական անունը։

Այս անյայտութիւնն է պատճառը, որ Մարիէսն ևս իր կողմից մի նոր վերնագիր է առաջարկում — Յաղագս Աստուծոյ։ Նա արդար է, երբ խսում է արդի բաժանմունքների և վերնագրի ղէմ, որոնք ղեղել են քննադատների ուշադրութիւնը և արգելք եղել Եղնիկի գործի ճշմարիտ մեկնութեան։ Մարիէսը կարծում է, որ Եղնիկը միապաղաղ գրութիւն է և ամենեւին կարիք չկայ քմահաճ տրոհումների։ Ձեռնելով գրքի բովանդակութիւնը աչալուրջ ուշադրութեամբ, մեր քննադատը առաջարկում է յիշածս նոր վերնագրերը, գտնելով այն միանգամայն համապատասխան երկի ընդհանուր բնաւորութեան։

Պէտք է խոստովանել, սակայն, որ Մարիէսի ընտրութիւնը եւս անյաջող է ու բռնազօսիկ և ինչ որ զարմանալի է, քնաչի պատշաճում իր մանրակրկիտ և ճշմարիտ վերլուծման։ Ամբողջ ուժ էլջի վերայ Մարիէսը ներկայացնում է մեզ բովանդակութեան տախտակը, որ ընդհանուր առմամբ ուղիղ է։ Անպաստելի միայն նորա եզրակացութիւնը, որ իբր թէ «ամեն ինչ բոլորում է» ճշմարիտ Աստուծոյ գիտութեան շուրջը։

Մինչդեռ վերլուծման տախտակից իսկ բացայայտ երևում է, որ խնդիրը աստուծոյ մասին չէ, այլ չարի և բարւոյ մեծ

1. Եղնիկի գործը մասնաւոր դասակարգման նիւթ է եղել Պետերը. համալսարանում 1914-16 ուսումն. տարիներին։

հարցն է, որ զբաղեցնում է հեղինակին։ Աստուծոյ մասին խօսում է այն չափով, որքան հարկաւոր է յիշեալ հարցի տեսակէտից։

Այդ չափի և բարւոյ և սրանց տեսակ տեսակ արտայայտութեանց ծագման և մեկնութեան բանալին համարում է անձն-իշխանութիւնը կամ ժամանակակից խօսքով ազատ կամքը։ Հետեւապէս եթէ ուզենայինք աւելի մտնել բնորոշել, պէտք է ասելինք, խօսքը անձնիշխանութեան մասին է։ Բայց որովհետեւ հեղինակը կանգ է առնում երկարօրէն չարիքների կամ իր խօսքով «անհարթութիւնների» վերայ և նպատակ ունի հերքել արմատացած թիւր հասկացողութիւնները, ամառապէս կրօնական մեծ վարդապետութեանց նոյն խնդրի վերաբերեալ ունեցած դաւանանքը, ուստի անդէպ չէր լինի ասել, որ խօսքը նրանց մասինն է, ազանդաւորների և հերձուածողների։

Միւս կողմից Յուդազ Աստուծոյ կուշար խորշիկ պիտի լինէր Եզնիկի համար այն պարզ պատկերացումով, որ նա իր նախարանի մէջ հարկ է համարում շնչտել, որ Աստուծոյ էութիւնը անհաս և անընդհատ է։ Սեղմ և գրեթէ քանդակ նախադասութեամբ յայտարարում է հէնց սկզբից, որ «առ նորա անընծութիւնն ընծայութիւն անգիտութեան մատուցանելի է և առ էութիւն նորին դաւանութիւն գիտութեան և ոչ ընծութեան»։ Ուրիշ խօսքով, Աստուծոյ անընծութիւնը գիտութեան և ուրեմն ընծանութեան նիւթ է, այլ միայն անպայման հաւատի։

Այս նկատողութիւնը ուղղուած է գնոստիկեան վարդապետութեան դէմ, որը հուսատիւն յաւատարմութեան էր և զբաղւած համարում գիտութիւն չգտնել և սորանով էր ուզում հիմնաւորել և մինչեւ իսկ փոխարինել հաւատը։ Գնոստիկեաններից էր հռչակաւոր վալենտինը, որի ուսման հերքումին է նուիրած Եզնիկի առաջին գիրքը։

Ահա ինչու համար դժուար է կարծել, որ գնոստիկեանների դէմ պայքարող մասնագիրը իր գործն անուանէր Յաղագս

Աստուծոյ, մանաւանդ որ խօսքը բնաւ Աստուծոյ մասին չէ։

Թուում է թէ Եզնիկի առաջին հրատարակիչ Աբրահամ վարդապետը աւելի մօտ է խնդրական վերնագրին։ Միայն թէ նոյն միտքը պէտք էր արտայայտել Եզնիկեան բառերով և նորա ճաշակով։ Եթէ բառը հերքման իմաստով նորաւոր է և խորթ Եզնիկին, ինչպէս արդէն դիտել է Հ. Գալէմեքեարեան։ Ընդդիմութեան փոխարէն Եզնիկ գործ է ածում յանդիմանութիւն։ Այսպէս Ա. 28, էջ 111 երեք անգամ կրկնում է յանդիմանել բառը. «զարտաքինսն իրօք ճշմարտութեան առանց զրոյ յանդիմանել և զկարծեալսն ներքինս և ոչ ճշմարտեալս գրովը սրբովը յանդիմանել»։ Զհիւզայն կարծիս, որովք յոյնք մուրեցեան, բաւական համարեացուք առաջնոցն բանիցն յանդիմանութեամբ՝ վրձարել»։ Գարծեալ՝ Մարիկոնի հասցէին ասում է էջ 196. «զորոյ անհամութիւնն ի դէպ ժամանակի յանդիմանեացուք»։ կամ էջ 192. «նախ էլընքսն իսկ բանիցն յանդիմանին»։ և այլն։ Այս տեղից հետեւում է, որ Եզնիկին իր գործը, իր անելիքը որոշում է յանդիմանութիւն բառով։

Նկատենք, որ նոյն գործածութիւն է և Բարսեղ կեսարեացու վեցօրեայքի մէջ։ Այսպէս էջ 3. «ոչ գիտեմ, ուստի պարտ և պատշաճ իցէ ասնել նախ սկիզբն ճառիս, եթէ ի յանդիմանութեան ընդունայնուութեան արտաքնոցն»։ Նոյնպէս էջ 4. «այլ ես գործ աւելի համարեմ կալ և դնել ընդ նոսա յանդիմանութիւն»։ Այլ է էջ 48. «և յորժամ յանդիմանին ի մէջ»։ և կամ էջ 61. «առ ի յանդիմանել զստութիւն նոսա»։ և այլն։ Յիշատակապատումի մէջ եւս ընդունում է նոյն իմաստով յանդիմանութիւն բառը ինչպէս էջ 23. յանդիմանութիւն մուր մտաց, այլ է էջ 46, 67։

Զմոռանք յիշել, որ Եպիփանի նշանաւոր գործը խորեանացու մօտ կուշար է նմանապէս Յանդիմանութիւն։

Հաւանական կը լինէր կարծել, որ Եպիփանի հետեւութեամբ Եզնիկին եւս իր գործն անուանէր Յանդիմանութիւն հերձուածող

ծոց կամ աղակերպ: Եզնիկը, կարծես, ազանդ է կոչում հեթանոս կրօնները և կամ փխխտափայական վարդապետութիւնները, իսկ հերժուած բառը վերապահում է քրիստոնեայ եկեղեցու ծոցում տեղի ունեցած այլամիտ ուսմունքներին:

Մի տեղ Եզնիկն իր գրութիւնը անուանում է ձառ. « Երպէս բազում անգամ յոգնացոյն օրինակօք ոչ մոռացար յառաջին ձառսն առնել », էջ 144: Իրաւացի կը լինէր կոչել Եզնիկի գործը ձառք յանդիմանութեան — մի պարզ ու անպաճոյճ վերնագիր, որ թէ լեզուական և թէ իմաստի տեսակէտից միանգամայն պարտ ու պատշաճ է մեր հեղինակի ճաշակին:

Վերնագրի խնդիրը շատ կարեւոր կէտ է. այստեղ է Մարիէսի աշխատութեան հանգույցը, այստեղ է այն նոր ջանք, որով ուզում է այլ լոյս սփռել Եզնիկի գործի վերայ, Անտարակոյս, Մարիէսն առաջինն է, որ ուղիղ է հասկացել Եզնիկի երկի զանազան բաժինների ներքին սերտ կապը, որի հետեանքով եղած կասկածները բնագրի պակասաւորութեան և կամ խառնակութեան մասին ընդմիջող ընկնում են իրր անհիմն ենթադրութիւններ: Չորս գիրքը իրենց զանազան մասերով կազմում են մի ամբողջութիւն: Չենք կարող բնաւ համաձայնել, որ այդ ամբողջութեան անունը Յաղագս Աստուծոյ է: Մարիէսի վերլուծական տախտակն իսկ բողոքում է այս հասկացողութեան դէմ:

Անվիճելի փաստ է, որ Եզնիկը կանգնած է պինդ անձնիշխանութեան սկզբունքի վերայ: Նորա բարձրութիւնից դիտում է կեանքի բացասական երեւոյթները, այն ինչ որ կոչում ենք չարիք, լինի ժողովրդապետական անպաշտութեան և հաւատալիքների աշխարհում, թէ օտար վարդապետութիւնների և աշխարհայեցողութիւնների մէջ, ընկնում է և բացատրում է բոլորը նոյն անձնիշխանութեան, անհատական ազատութեան, սկզբունքով: Եզնիկի ապագայ հրատարակչին կարող էինք յանձնարարել ձԱՌԻ ՅԱՆԳԻՄԱՆՈՒԹԵԱՆ գլխագիրը¹:

(Շարայարելի)

Պրոֆ. Ն. Արուս

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌՆԵՐ

ԱՆԿԱՆՈՆ ԳՐՈՑ ՄԵՋ

(Հին կտակ. Վեհա. 1896, Նոր կտակ. Վեհա. 1898)

1. Անկէորդ

Ապա յայնմ ժամանակի նեղեացի վիշապն և յառաջնորդաց իւր ըմբռնացի և յահկէորդացն կապեացի, և մի ոք ընկալցի զնա, զի հենդ զարիւն սրբոցն ի քաղաքս և ի գաւառս (Հին կտ. էջ 394):

Անձանթի և թերևս սխալագիր նորագիտ բառ, որուն իմաստն անյայտ է. բայց ստալընդ բառին յարադրութենէն կը հասկցուի որ ասոր մերձաւոր նշանակութիւն մը ունենալու է:

2. անբան

Ընդէր տրտում նստեալ կայք աստ զատարկ անբան (Նոր կտ. էջ 90):

Դատարկ բառին հոմանիշն է և կը նշանակէ « անգործ »: Կազմուած է յառ բառին ուսմկական « գործ » առումէն. կը գտնենք նաև նոր գաւառականներուն մէջ, ինչպէս Եւդոկիա, Երևան, Չէյթուն, Նոր — Բայազիտ:

3. Բարձրաբան

Ընդ անհղ և ընդ զարմանալի ճանապարհան, ընդ անձուկ կապանս և ընդ

1. Մարկիոնի յանդիմանութեան յառաջարկում, որ է նախորդ, երրորդ, զրգի վերջին երկու էջը, Եզնիկի կործան թէ հարցը չըլտմ է աստուծոյ էութեան, յարտարարելով, « ապա ցուցցուք թէ ով է աստուած և զինչ նորա արարածք »: Սակայն և այս հանգամանքը վկայում է միայն մի բան, որ եղծը զանազան երկերի հաւաքումն, խմբագրութիւն է, ինչ որ պիտի տեսնենք, Հաւանքին Մարկիոնի հերքումն այլ տեղից է վերցրած, և անձնիշխանութեան գծի վրայ յարմար, ձեւակերպող պատշաճ տեղ չի գտել: